

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՒԹԿՈՒՆ⁺

ԿԱԹՈԼԻԿՆ ԽԱԾՎՅԹԻ.

ՀԱՌՈՎՄԻ պապի նոր շրջաբերական կոնդակը, որի մասին յիշուեցաւ Արարատի նախօրդ համարում՝ հրատարակուած է արդէն, Այս կոնդակին ամենից առաջ հետաքրքիր է Անդիմական եկեղեցւոյ այն ներկայացուցիչների համար, որոնք երազում են, թէ կարելի է փախադարձ զիջումներով մի ընդհանուր եկեղեցական միութիւն հաստատել՝ պապի գերագահութեամբ։ Այլ մօտից ծանօթ է ՀԱՌՈՎՄԵԶական եկեղեցւոյ անցեալին, նորա համար վաղուց պարզ էր, իսկ այդպիսի միութիւն երազողների համար այսուհետև գոնէ պարզ պէտք է լինի, թէ ՀԱՌՈՎՄՆ անընդունակ է որ և է զիջումն անելու, իւր դարերով արմատացած սկզբունքներից մազի չափ անդամ շեղուելու, «լինի դա, ինչպէս նկատել է կարգինալ Ազգան, այնպիսի մի ցանկալի և օրհնեալ նպատակի համար, ինչպիսին է քրիստոնէութեան կրկն միանալը»։

Այս անդամ ևս Պապն ամեն ինչ պահանջում է, առանց մի բան տալու։ Յորդորելով ըլոր քըրիստոնեաներին մի, ընդհանրական եկեղեցւոյ գիրկը վերագառնալ, Լևոն ԺԴ. իւր պատճառաբանութիւնների հիմք առնում է այն հին քրիստոնէական սկզբունքը, թէ եկեղեցւոց գուրս փրկութիւն չկայ, որովհետև եկեղեցին Քրիստոսի մարմին է և ով գուրս է նորանից, հաղորդակից չի կարող լինել Քրիստոսի։ Սակայն կամենալով ցոյց տալ, որ այս սկզբունքից բղնած եկեղեցւոյ գաղափարական միութեան համապատասխան մի մարմնաւոր տեսանելի միութիւն ևս պէտք է լինի՝ նա ձեռք է առնում փաստեր, որոնք անթիւ անդամ կրկնուած ու անթիւ անդամ հերքուած են և որոնց զօրութիւնն այսօր միայն ՀԱՌՈՎՄԵԶական եկեղեցւոյ զրկում մի առանձին տրամարանութեամբ զարգացածներ ճանաչել կարող են, Եկեղեցւոյ միութեան իրեւ արտայացտիչ նշաններ ընդունում է նա հաւատոյ և եկեղեցական վարչութեան միութիւնը։ առաջինը միայն բաւական չէ, որովհետև Ճշմարիտ հաւատը որոշելու համար մի հեղինակութիւն պէտք է, իսկ այդպիսի հեղինակութիւն ու Գիրքը միայն լինել չէ կարող, ինչպէս բողոքականները պնդում են, քանի որ կարելի է զանազան կերպ մեկնել այն։ Քրիստոս իւր եկեղեցին տարտամ վիճակի մէջ չէ թողէլ, այլ կարգել է իւր սեփական հեղինակութեամբ օժտուած մի իշխանութիւն, որ ու Գիրքն ուղիղ մեխում է, և խորհուրդները բաշխում

և որոշում ճշմարիտ հաւատը Հիմնելով տեսանելի եկեղեցին, նա պէտք է կամենար, որ այդ եկեղեցին մի տեսանելի գլուխ ևս ունենայ, իւրեւ իւր ներկայացուցիչ և փոխանորդ, այդ փոխանորդը և Պետրոսն է և նորան յաջորդող Հոռոմի քահանայապետները։ նոցա վերայ ուրիմն և հաստատուած է եկեղեցւոյ միութիւնը, Խափսկոպանները, իրեւ առաքեալների յաջորդներ, այն ժամանակ միայն այդ միութեան մէջ կարող են համարուել, երբ հասպանդ են Պետրոսի յաջորդին, ապա թէ ոչ մի «անկարգ», անկանոն խումբ կը կազմնեն։ Յաւալի է արդարեւ տեսնել, թէ ինչպէս այս ժամանակում իրեւ այնքան մեծ կարիք կայ քրիստոնէութեան բոլոր ոյժերը կեղրոնացնելու և հեթանոսացած քաղաքակիրթ աշխարհի առաջ նորա վարկը բարձրացնելու՝ այսպիսի լեզուով է խօսում քրիստոնէական եկեղեցւոյ ամենայայտնի ներկայացուցիչը, շարունակելով հետևող լինել այն աշխարհասեր և իշխանասեր Սիմոնին, որին «Երթ յետս իմ սատանայց ասաց Փրկիչը», և ոչ այն խոնարհ և իւր Տիրոջ սիրով լեցուած Պետրոսին, որին «ա իւր ոչխանները արածեցնելու իրաւունքը տուաւաւ, Ոչ մի ուղիղ քրիստոնէան կարող լինել Քրիստոսի։ Սակայն կամենալով ցոյց տալ, որ այս սկզբունքից բղնած եկեղեցւոյ գաղափարական միութեան համապատասխան մի մարմնաւոր տեսանելի միութիւն ևս պէտք է լինի հետևող տեղեր ունի նա և ինչպիսի վտանգներ են սպառնում նորան իւր իսկ բուն հայրենիքում՝ Խոտլիսյում։ Վերօնական Եպիստուկ թերթի թղթակիցը հաղորդում է, որ Միլանից ոչ հեռու գտնուող փոքրիկ Պիառչենտա քաղաքում շատ արագ կերպով զօրանում և սպառնական կերպարանք է ստանում մի նոր հերձուած որի պարագլուին է տեղացի Միլանի քահանան, Սա լինելով մէկը Խոտլիսյի սակաւաթիւ ազատամիտ կամ ազգութեան գաղափարով ոգեւորուող հոգեկորականներից, ընդհարումներ է ունեցել անցեալ տարի իւր եպիսկոպոսի հետ, որ ծայրահեղ ուղարմանունական է, և չկարողանալով արդարութիւն գտնել՝ բաց է արել իւր համար մի առանձին եկեղեցի, ուր սկզբում միայն 250 հոգու համար տեղ կար, իսկ յետոյ նա ստիպուեցաւ ընդհարձակել, 1000 հոգու համար դարձնել, բայց այժմ

Պապականութեան այս համարձակ ծրագիրների և անսահման ձգտումների մասին լսելուց յետոյ, հետաքրքիր է տեղեկանալ նաև, թէ ինչպիսի թոյլ տեղեր ունի նա և ինչպիսի վտանգներ են սպառնում նորան իւր իսկ բուն հայրենիքում՝ Խոտլիսյում։ Վերօնական Եպիստուկ թերթի թղթակիցը հաղորդում է, որ Միլանից ոչ հեռու գտնուող փոքրիկ Պիառչենտա քաղաքում շատ արագ կերպով զօրանում և սպառնական կերպարանք է ստանում մի նոր հերձուած որի պարագլուին է տեղացի Միլանի քահանան, Սա լինելով մէկը Խոտլիսյի սակաւաթիւ ազատամիտ կամ ազգութեան գաղափարով ոգեւորուող հոգեկորականներից, ընդհարումներ է ունեցել անցեալ տարի իւր եպիսկոպոսի հետ, որ ծայրահեղ ուղարմանունական է, և չկարողանալով արդարութիւն գտնել՝ բաց է արել իւր համար մի առանձին եկեղեցի, ուր սկզբում միայն 250 հոգու համար տեղ կար, իսկ յետոյ նա ստիպուեցաւ ընդհարձակել, 1000 հոգու համար դարձնել, բայց այժմ

այդ էլ չե բաւականանում օրական երկու անգամ նորա պերճարան քարոզները լսելու հաւաքութեանը, Բացի գորանից նա ունի նաև եռեղեցուն կից մի դպրոց, ուր քրիստոնէական վարդապետութիւն է դաս տրուում և 500-ից աւելի մասնէներ են յաճախում, Առ հասարակ Միքայիան չափազանց մեծ եռանդ և գործունելութիւն է ցոյց տալիս, բայց նա մենակ է՝ հոգևորական գործակիցներ չունի, նա ներկայանում է իրեն, հետևող Սալահարոլլայի, որի անունով և հրատարակում է Հիերոնիմոս Սալահարոլլայ թերթը, բայց նորա քարոզութիւնը հիմնուած չե այն որոշ սկզբունքների և վերմ գաղափարների վերայ, որոնցով ոգեւորուում էր Գլորիենտիայի նահատակը, Այդ է ահա նորա յառաջ բերած շարժման թոյլ կողմը, Պէտք է նկատել, որ առհասարարակ կաթոլիկութեան դրեկից ելածները՝ մանկութիւնից ի վեր սնուած լինելով նորարմաս նախապաշտումներով չեն կարողանում երբեք կատարելապէս թօթափել նոցա լուծել և մի կտրական բան անել, ուստի նոցա սկսած գործը սովորաբար կիսատ է մնում, Միքայիան բանագրաների ենթարկուած լինելով հանդերձ՝ շարունակում է «Կաթոլիկ-Հռոմէական քահանայց ստորագրել, նա սկզբում «Փարիսոցիների որջ էր անուանում միայն իւր եպիսկոպոսի դիւնը, բայց յետոյ քայլ առ քայլ այնտեղ հասաւ, որ վատիկանն ևս ոչ միայն փարիս երիս երիս որջ պահանջանակ պարագան է նոր շարժման վախճանը գտնուար է գուշակել, թղթակիցն այս առօթիւ յիշում է, թէ էմիլ Զօլայի նորերս հրատարակած «Հռովմ» վեպը ահազին ազգեցութիւն է անում կաթոլիկ հասարակութեան բոլոր շրջաններում, «Կենդանի բնաւորիչ կերպի նկարագրելով վատիկանի զանազան գործիներին՝ սկսած բարձրերից մինչև ամենաստորինները, այնպէս որ իւրաքանչիւրը ներկայանում է իրեն մի անմոռանալի տիպ, այդ գիրքը կաթոլիկութեան աւելի մեծ հարուած է տուել, քան ամեն տեսակ գիտնական յարձակումները և քաղաքական անուանարկող գրուածները»:

Քրանսիայում վերջերս շատերը սկսել են այն կարծիքը յայտնել, թէ Անգլից թագուհին գաղանի կաթոլիկութիւն է ընդունել, որ և արտայայտում է իւր գէպի կաթոլիկ ազնուականութիւնը և հոգեւորականութիւնը ցոյց տուած համակրութեամբ և նոյն իսկ իւր որդիկական ակնածութեամբ գէպի պապը, բայց հրապարակաւ չի խոստովանում, որովհետեւ դա գէմ կլինէր սահմանադրութեան, Ֆիդայ ու յի մի թղթակիցը զանազան փաստերով հերքում

է այդ կարծիքը, առարկելով, որ թագուհին այժմ աւելի բողոքական է քան երբեք, միայն թէ նա աղաս հայեացքներ ունի քրիստոնէութեան նկատմամբ, իշնակս օրինակ ոչ մի խօսքովցոյց չէ տուել իւր գդալոհութիւնը իւր թոռների օրմող գրսութիւն ընդունելուն գէմ:

— Կաթոլիկ եկեղեցւոյ հասարակ ժողովրդեան վերայ ունեցած ազգիցութեան զարգանալու արտաշայտիչ նշաններից մէկն էլ ներկայում այն է, որ մասունքների պաշտօնը և ուխտագնացութիւնը մի քանի տեղ շատ առաջ է գնում և գորան իրեն հետևանք միշտ նորանոր մասունքներ են գտնուում, Այսպէս Պավիլիայում նորերս երկար որ ոն ելուց յ ետոյ գտել են ս. Խպիփանիոսի գլուխիր, իսկ Քրանսիայում Օրէկանի կոյսի զրահը, որ լսուաւնդութեան նորեր էր նորան Կարլոս Ֆի. թագաւորը:

— Փարիզում շինուում է մի լուղորդ եւ կեղեցի, Դա մի մեծ շոգենաւ է, որ կրում է Աւելոն Ժ. Վ. անունը և ունի մի ընդարձակ բաժանմունք աստուածապաշտութեան համար յատկացրած, Նա պէտք է ծառայէ իրեն շարժական եկեղեցի Ավերիկայի վայրեններին քրիստոնէութիւն քարոզող մինիստրների համար և այնպէս է յարմարեցրած, որ գիւրութեամբ կարող է ափերին մօտենալ և գետերով բարձրանալ:

— Սպանիայի Բարցելոնիա քաղաքում յունի 7-ին Տիրոջ մարմնի թափորը կատարելու միջոցին զինամիտի մի սարսափելի պայտումն տեղի ունեցաւ, որ մեծ վնասներ ու արհաւիրը պատճառեց, Ինչպէս յառաջ եկաւ այդ աղետը՝ որոշ յայտնի չէ, բայց նա արտայայտութիւն է անիշխանականների Սպանիայում գրաւած վտանգաւոր գիրքի,

ՕՐԹՈԴՈԽԾ ԵԿԵՂԵՑԻ.

ՍԱԱԿՈՂԱՆԱՆ ԵՐԿԻՒՆԵՐԻ:

Հոռոմը առանձին ջանքեր է գործ գնում նաև սլավոնական երկիրներում կաթոլիկութիւնը յառաջ մէկելու, Ուումինիոյ Գեննադիոս մետրապոլիտի գահընկէց լինելը կաթոլիկ միսիոնարների մեքենայութեանց են վերագրում, Մետրապոլիտի հետ, որ ջերմ պաշտպան է եղել օրմողոք եկեղեցու շահերին, շատ խիստ ու անարդար կերպով վարուեցան, Երբ սինոդը նորա մասին վճիռ էր կայացնում, թոյլ չարուեցաւ, որ նորա պաշտպանողական ճառը չկարգացուեցաւ, նորա զրկեցին բոլոր եկեղեցական կարգերից և մի վանքում փակեցին, մեղադրելով պաշ-

տամունքի մէջ մոցրած հերետիկոսական փոփոխութիւնների, սինոդի վերայ գերիշանութիւնը բանեցընելու ձգտման և ուրիշ այսպիսի զանցառութիւնների համար, Ականյ զայրոյթը այս վճարի գեմ այնքան սաստիկ է, որ կառավարութիւնը ստիպուած է պահապան զօրը նշանակել Մետրապոլտին պատսպարող վանքի վերայ հսկելու Քուսարենտի շատ տիկիններ պայման են դրել, ոչ մի պետքի համար չգիմել նորան դատապարտող եպիսկոպոսներին, պիտի որ բարձր շրջաններում այսուհետեւ եկեղեցական արարողութիւնները մեծ մասամբ առանց եպիսկոպոսների մասնակցութեան տեղի կունենան, որովհետեւ միայն մի եպիսկոպոս չէ ստորագրել յիշեալ վճռին, Մետրապոլտի գահազուրկ լինելը զգալի հարուած են համարում օրթոդոքսութեան համար Ռումինիայում:

— Ոչ պահաս ցաւ և զայրոյթ է պատճառում օրթոդոքս եկեղեցւոյ ներկայացուցիչներին, այն զրկանքը, որ վերջներս նոցա եկեղեցին հունդարիայում է կրել, Այստեղ մաջար ժողովրդի հազարմեայ դոյութեան փառաւոր հանդէսների առթիւ մի պատճառաւորութիւն է ներկայանում Դաւանութեամբ ինքը ինքը լով պաշտամունքի մէջ եկեղեցական սլաւոններէնի փոխարէն մաջարերէն լիզու մոցնել: Խնդիրն ի հարկ է յարդուում է և յաջորդ օրն իսկ համալսարանի եկեղեցում պաշտամունքը մաջարերէն լեզուով է կատարուում, թէեւ ուսւազ ազգաբնակութիւնը այդ լեզուից աւելի բան չէ հասկանում. քան հին սլաւոններէնից, Այդ փոփոխութեան հետևանքը համարուում է 200.000 ուռաների կորուսը կամ այլսեռուելը՝ մաջարանալը, Այդպիսի այլասեռման Գալիցիայում քիչ չէ նպաստում: Պերկոնի Յեւտիկէ-ի թղթակցի նկարագրելով, Լվովի յղին-հոմեէսկան մի արարական եկեղեցւոյ մետրապոլիտ Սեղենստրոս Սիմբրատովիչը, որ նորերս կարդինալի աստիճան է ընդունել պասլից: Այն օրուանից, երբ նա զանազան մեքենայութեանց շնորհիւ մետրապոլտական գահը իւր հօրեցրայր Յովսեփից իւլել է, ամեն ջանք գործ է գնում միարարական եկեղեցւոյ մէջ ջնջել օրթոդոքսութեան հետքերը և ձգտումն ունի մի առանձին պատրիարքութիւն կազմելու:

— Իբրև հակագչիո Հռովմէական եկեղեցւոյ այս յաջողութիւններին, մեծ նշանակութիւն է տրուում Զերնագորիայի Նիկոլայ իշխանի Սերբիայի թագաւորին արած պայցելութեանը: Երկու իշխանութիւնների մէջ երկար ժամանակ յարաբերութիւնները առ սառն էին և մինչեւ իսկ սերբ ժողովրդի մի մասը

ցանկանում էր Նիկոլայ իշխանին երկու երկնների միահեծան թագաւոր տեսնել: Վերջինս այցելելով այժմ Սերբիայի մայրաքաղաքը և շատ սիրալիր ընդունելութիւն գտնելով այնտեղ, պէտք է ապացուցանէր, որ ինքն այդպիսի ձգտումներ չունի, այլ կամնուում է երկու ազգակից ժողովրդներին բարեկամ և գաշնակից տեսնել: որոնց հետ միացած նաև Բոլգարիան ուսւաց հովանաւորութեան ներքոյ՝ կարող կլինին Բաղկանիոյ սլաւոն ժողովուրդների մի զօրեղ գաշնակցութիւն յառաջ բերել, զօրացնելով նաև օրթոդոքս եկեղեցւոյ ազդեցութիւնը:

ՕՌԻՍԱՍՏԱՆ.

Նոցին Կայսերական Մեծութիւններ՝ Թագաւոր Կայսրը և Կայսրուհին փառաւոր հանդեսով մուռուգործ եցին ամբողանիստ մայրաքաղաքը յունիս 22-ին: Ժամը 11-ին արքայական գնացքը կայարան հասաւ, ուր կառավարչապետ Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչը յայտարարութիւնն ընդունելով՝ Թագաւոր Կայսրը Կայսրուհու հետ պատճամաւորութիւններին մօտեցաւ և աղ ու հաց առաւ: Ապա քաղաքագլուխը մի ճառով բարի գալուստ մաղթեց նոցին Մեծութեանց և մատուցեց քաղաքային նորոնդի որոշմանց վաւերագրերը, որոնց համաձայն այդ նշանաւոր հանդիսի առթիւ ա) քաղաքային մանկական հիւանդանոցում կօր նոր մահճականներ են աւելացուում: բ) 83.846 ըուբլի ստանայիքներ ներուում են. գ) նպաստ է տրուում յանուն Քըրիստոսի Յարութեան կառուցած նոր տաճարի շինութեան համար: — Եյնուհետեւ միւս պատճամաւորութիւններին ևս ընդունելուց յետոյ նոցին Մեծութիւններն ուղևորուեցան գէպի Կազմակերպի մայր եկեղեցին, ուր բազմաթիւ հոգևորականներ, նախարարներ, պետական նորհրդականներ և ուրիշ պաշտօնեաներ ժողովուած էին զիմանըրելու համար: Համբուրելով գաւթում ս. խաչը, Թագաւոր Կայսրն ու Կայսրուհին, հոգևորականութեան առաջնորդութեամբ, որոնց զլուխ էր անցած Պալլադիյ մետրապոլիտը միւս սինոդականներով տաճար մտան: ապա Մետրապոլիտը մի ճառով ողջունեց Մեծ Թագաւոր Ների մուտքն ի մայրաքաղաք, և տեղի ունեցաւ համառ մաղթանք:

Մայր եկեղեցւոց նոցին Մեծութիւններն ուղևորուեցան գէպի Պետրոպալավովսկ գղեակը և ապա Յարսկոյ Սէլո:

— Յունիսի 25-ին Ռուսաստանի բոլոր եկեղեցիներում մաղթանք կատարուեցաւ ի յիշատակ Նիկոլայոս Ա. Կայսեր ծննդեան հարիւրամեակի:

— ճամանիայում՝ օրթոդոքս առաքելութեան պարագլուխ՝ Կիկովայոս և պիսկոպոսը՝ նոր ընդհանուր ժողով է Հրաւիրել, որ պետք է բացուէր Տոկիոյ յում յունի 25-ին, Աերջին ժողովը տեղի է ունեցել 1891 թ.-ին, ներկայում ճապոնիոյ օրթոդոքս հաւատացեալների թիւը 22:576 հոգի են Հայութում:

ԱՌՈՂՋԵԱԿԱՆ ՆԿԵՐԾՑԻՆԸ.

Ա Ն Գ Հ Ի Ա.

ԱՇԽԱՏՐՐԻՒԹՈՒՄ ժումարուած եկեղեցական խորհուրդը՝ Բոշեստըրի եպիսկոպոսի առաջարկութեամբ, միաձայն հետևեալ որոշումն է ուղղել Տաճկաստանի տառապեալ Հայոց համար Հանգանակութիւններ անող յանձնափողովն. «Այս լաւեանը ցանկանումէ եկեղեցւոյ անդամներին յանձնաբարել, որ պարտականութիւն համարեն ուղարկել անլորհատ և առասաձեռն նպաստ Փոքր Ասիոյ տաճկական նահանգներում տառապող և անանի քըրիստոնեայ ժողովրդեան կարիքների համար՝ թէ իրենց գութը գեղի նորա արգահատելի վիճակն արտայայտելով և թէ շնորհակալութիւն ու յարգանք՝ քրիստոնէական հաւատի մէջ ցցց տուած հաստատակամութեան համար։ Յանձնաժողովն իւր կողմից յայտնելով, որ արգեն 50000 ֆունտ ժողովնել և տեղ է հասցել ու յոյս ունի նոյնքան ևս աշնան ու ձմեռուայ ընթացքում ժողովելու, հրահրում է գաւառական հոգեկաններին աջակցել իրեն իրու գործակալներ։

— Ինչպէս յայտնի է, ոչ մի տեղ այնպէս յառաջ չէ զնացել բարեգործութիւնը ինչպէս Անգլիայում՝ ուր տարեկան 120 միլիոն ֆունտ (մօտ 1200 միլիոն բուրլ) դրամ է ժողովուում յօժարակամ նուէլներով բարեգործական նպաստակների համար։ Այդ դրամի մի նշանաւոր մասը գումարուում է նպատակաւ տրուած հանդիսաւոր ճաշկերոյթների միջոցն. Մինչև այժմ տեղի ունեցած այդպիսի ճաշկերոյթներից ամենաարդիւնաւորը եղել է յունիսի 10-ին Վալեսի Մեծ իշխան Էդուարդի նախագահութեամբ կազմածը՝ ի նպաստ Գիւի հիւանդանուցի, ուր մօտ մէկ ու կես միլիոն բուրլ դըրամ է ժողովուել։ Հրաւիրեալների թուումն էր նաև Վագան Կարդինալը։ Գիւի հիւանդանուցը հիմնուել է 1724 թ.-ին Թումաս Գիւի բարերարի ձեռքով, որ կտակել էր այնքան դրամ, որը ան հարկաւոր էր այն 150 տարի կառավարելու համար։ 1829-ին մի ուրիշ վաճառական յատկացը է նորան 180 հազար ֆունտ, որով կարելի է եղել մինչև 1880 թ.-ը 600 մահճակալ պահել։

Բայց յետոյ նորա միջոցները պակասեցին և որպէս զի հիւանդանուցը նախկին վիճակի մէջ պահպանուի, հարկաւոր էր 500,000 ֆունտ, և աշա 150,000 ֆունտը մի անգամից գումարուած է։ Անզիացւոց բարերարութեան եղանակին գալով պէտք է ասել, որ նորա ինչպէս ահասարակ ամեն բանում այնպէս էլ մասնաւորապէս այստեղ՝ խիստ գործնական են։ Լոնդոնի արուարձաններից մէկում մի բարեգործական հաստատութիւն գիտելուց յետոյ, որի նպատակն է հասարակ բանուորներին արժան գոնով պարկեշտ, ընկերական և կրթիչ կեանք վարելու ամեն զիւրութիւններ տալ, իմ հարցին, թէ ինչ միջոցներով է պահուում այդ մեծ հաստատութիւնը, ես զարմացած պատասխան ստացայ կառավարչից, թէ ոչինչ, նա ինքն իրեն պահում է, Ակզիմում մի քանի տարի հարկաւոր է եղել մի որոշ գումար գնել, մինչև որ հաստատութիւնը ստիքի կանգնի. ապա շնորհի հիմնողների անձնուեր ջանքերին, Ճշգրիտ հաշուեպահութեանն ու կարգապահութեանը, նա այնքան արդիւնք է բերում այժմ որ կարող է իւր ծախըը ծածկել, 15—20 կոպէկով զիւրեր մաքուր անկոյին տալով գործաւորներին, մինչդեռ քաղաքում հաղթի կարելի կինը է 50 հ.-ից պակաս գտնել, և ի հարկ է առանց միւս յարմարութիւնների՝ խոհանոց, գրադարան, խաղասենեակ և լուսականութիւնների մինչդեռ շաղաքանակ է, Միայն անձնուեր հիմնադիրն է, որ շարունակում է ձրի աշխատել։ Առհասարակ բարեգործութեան համար ընդունուած ոկզրունք է Անդլիայում, ոչ թէ դրամ տալ, այլ աշխատանք ծոյլերին, ստահակներին, հարբեցողներին կամաց կամաց գործի վարժեցնել, իրենց աշխատութեան համեմատ և բարձրացնելով վարձը՝ առանց նոցաձեռքը ապալու, մինչև որ կարելի կինի վստահել նոցա ուղղամտութեան վերայ։

— Մայիսի 6-ին Բ թ ի տ ա ն ա կ ա ն ու ա ր տ ա ս ա հ մ ա ն ե ա ն աստուածաշնչի ընկերութիւնը տօնել է իւր գոյութեան 92 ամեայ տարեգրածը։ Այդ շնչանում, սկսած 1804 թուից, ընկերութիւնը վաճառել է 147,366,669 օրինակ ս. Գիրք։ Աերջին տարուայ ընթացքում կատարուել են վեց նոր թարգմանութիւններ, շաշուած արգեն սկսուածների շարունակութիւնը կամ հին թարգմանութիւնների վերստին մշակութիւնը։ Միայն 2ինաստանում այդ տարին ցրուել են 232,941, իսկ ճապոնիայում 257,578 օր. ս. Գիրք։

Գ Օ Բ Մ Ա Ն Ի Ա.

Christliche Welt թերթը շարունակում է, թէպէտ միայնակ, բայց մեծ եռանդով պաշտպանել Հայերի գատը և նպաստներ ժողո-

վել տառապեալների համար։ Գրեթէ իւրաքանչչիւր համարում նա մի յօդուած է նուիրում այս հարցին և տեղեկութիւններ է հաղորդում տաճկահայոց մասին։ Եյսպէս օր 23 հուլիսորա մի թըղթակիցը գրումէ՝ «Ոյոր դրամական նուերները ինչքան էլ նորա անհրաժեշտ են և բարերար, հայերին իրենց յուսահատական վիճակից չեն հանի, քանի որ թուրքը հանդիսա կերպով շարունակումէ կոտորել։ Տաճկական կառավարութիւնը աշխատում է յիրաւի փոշի ցանել եւրոպական պետութեանց աչքերում։ մինչեւ իսկ զանազան լաւ բաներ է խոստանում։ բայց այնուամենայնիւ նայումէ ձեռները ծալած կամ գաղտնի հեգնական ուրախութեամբ, թէ ինչպէս աւելի և աւելի թուրք հայ քրիստոնեայ շների ի արիւն է հոսում։ Տաճիկ զինուորները փոխանակ նեղեալներին պաշտպանելու, մասնակցում են կատարուող գաղանութիւններին։ — Ի՞նչ պէտք է անել, Կարելի է գեռ երկար անտարեր դիտել այդ ամենը։ Պէտք է ասել, թէ հայերն իրենք են մեղաւոր, որ բան պրտեղ հասաւ։ Թողնորա մասամբ մեղաւոր գտնուեն, թողդ այն վատ համբաւն ևս, որ հայերն արելքում վաստակել են։ * իրաւացի կողմեր ունենայ՝ այնուամենայնիւ այսպանը պարզ է։ Հայ ժողովուրդն այս բոպելին աւաղաների ձեռն ընկած թշուառն է, որի ցաւը մինչեւ երկինք բողոքում է, Պէտք է մինք քահանայի ու զետացու նման սառն կերպի ուսերը շարժելով կամ բարեպաշտ կարեկցութեան խօսքը կրկնելով մօտից անցնենք դնանք։ — Ինչպէս պէտք է օգնել, Միայն դրամը բաւական չէ, եթէ եւրոպական քըրիստոնեայ աշխարհը ոտքի չկանգնի, եթէ եւրոպական պետութիւններն ու իշխանները չկրկնեն հաստատ և միաձայն, ներքուստ այնչափ թոյլ և նեխեալ, Տաճկաստանի երեսին, մինչեւ պրտեղ և ոչ աւելի, այն ժամանակ այդ խեղճ ժողովրդին օգնելու հնար չկայ, Բայց այդ միակ հաստատ խօսքը բաւական կլինէր, Թո՞ղ պետութիւնները, եթէ ոչ իրենց քրիստոնէական պարտականութիւնը, գոնէ մարդասիրութեան ամենասպազ սկզբունքները միշեն։ Ի՞նչ է ժամանակակից քաղաքակրթութեան յառաջիմութիւնը, երբ Եւրոպայի աչքի առաջ պրտիսի սոսկուի գաղանութիւն է տեղի ունենում և տարուում։ — Սակայն ի՞նչ կարող ենք մինք անհասներս անել, Աւրիշ ոչինչ, բայց եթէ ամենայն եռանդով խղճերը յուղել և սէր զարթեցնել, աշ-

խատել և աղօթել . . . Խոլամը յաղթանակում է։ Տանջուող քրիստոնեաների բերանից, որոնք տեղ տեղ հերոսական նահատակների մահով են մեռնում իրենց հաւատի համար, ինչպէս նախնի քրիստոնեայք։ Շնչում է գեպի արևմանեան քրիստոնեայ աշխարհը վաղեմի մակեղունացու կոչը. Եկու օգնիր մեզ, * Թողը բեմի վերայից։ Հանգէսների ժամանակ, ժողովներում լրագիներում ու թիրթերում ամեն ոք ու ամեն տեղ, երբ գեպքը բերում է, գործէ հայերի համար և հասարա ակաց կաց կարծիքի վերայի աշխատակ իրբեն, մարդ գիտի մարդ կամ ժամանակը արիստութիւններն ու իշխաններն արիանան վերջարէս և իրբեն քրիստոնեաններն, առաջասարակ իրբեն, մարդ գիտի մարդ կամ ժամանակը արիստութիւնները մոլեռանգութեանը վերջ գնել հրամայեն, այդ է միակ ելքը, Պատմութիւնը, ինքն Աստուած պէտք է պատժէ մեր զանցառութեան մեղքը։

Մի ուրիշ աշխատակից Զմիւռնիայից քննելով 27 հուլիս հայոց կոտորածի պատճառները, զինաւորն այն հանգամանկն է համարում։ որ քրիստոնեանները տաճկական նահանգներում զինուոր չտալով և ուրիշ առաւելութիւններ ունենալով, աւելի արագ են մածում և հարստանում քան թուրքերը, ուստի հարկաւոր է լինում ժամանակ առ ժամանակ նոցա թիւն արհեստական կերպով պակասեցնել, և մինչդեռ յոյներն ծովեզրեայ քաղաքներում ապրելով, աշխարհի աչքի առաջ, աւելի ապահով կարող են լինել՝ հայերը երկրի ներսը խուլ անկիւններում անարգել ջարդ են կրում ու կողոպտուում։ մինչեւ որ բոլորովին կորցնեն իրենց գերակշռող գերը, «Յիրաւի մեր այս քրիստոնեայ եղբայրների վիճակն այնչափ ողբալի է, որ քարն անգամ կիսդար նոցա սակայն քրիստոնեայ պետութիւններն իրենց քաղականութեամբ խղճալ չցիտեն, այլ անձկութեամբ և նախանձով գիտում են իրար, մի գուցէ մէկը կամ միւսը չափից աւելի գերակշռութիւն ստանայ արեւելքում։ Այս, եթէ թուրքերը ամբողջ ժողովրդին բնաջին անէին, մի հարուածով երկրի երեսից կորցնել կարողանային կամ կամենային, այդ խեղճ ժողովրդի բանը՝ ստիպուած է զրիմէ մարդ աւելի լաւ կլինել, քան այդպիսի զարհուրելի ստրկութեան մատնուած, հոգւով և մարմնով յարատե տանջանկների ենթարկուած լինել։ Այն հարցին, թէ ինչով կարելի է օգնել, նա բաւականնում է պատասխանելով, թէ գոնէ ամեմիւ որը ու մնացած մանուկներին պէտք էր մի կերպ հովանաւորել։ Արդէն առաջարկուներ եղել են, որ այդպիսի որբեր Գերմանիա բերուին և զանազան ան-

* Զործք ժ. Ժ. 9:

ձանց ու հաստատութիւնների ինսամբին յանձնուին, բայց խմբագրութիւնը ազնուարար նկատել էր, որ անիրաւացի կլինէր այդպիսով անմեղ արարածներին իրենց մայրենի հողից կարել և օտար շնչով սնուցանել: Ուստի թղթակիցը առաջարկում է օգնել Զմիւնիսիցում արդէն զոյութիւն ունեցող Դերմանական որանոցին և եթէ կարելի է նոր այդպիսի որբանոցներ ևս հիմնել: Այդ որբանոցի համար խմբագրութիւնը վաղուց հանգանակութիւն էր բաց արել, բայց տաճիկ կառավարութիւնը թոյլ չէր տալիս հայ մանուկներ տանել այնտեղ: Նոյն թղթակիցը իւր վերջին նամակով (28 հ.-ում) յայտնում է այժմ՝ որ արդէն 16 մանուկներ բերուած են Աւահայից և մտագրութիւն կայ նոցա թիւը մինչև յիսուն և եթէ կարելի է աւելի, հասցնելու: Նոյնպիսի մի որբանոց կայ նաև Պրուսայում: Բազգելի միսիոնարների ինսամբի ներքոյ, ուր ևս հայ մանուկներ սնուցանում են:

Նոյն թերթի 28 հ.-ում մի նկատողութիւն կայ, ուր ակնարկելով, թէ ինչքան աւելի թոյլ է ներկայ Եւրոպական քրիստոնէութեան համակրութիւնը հայերի համար, համեմատած նորա հետ, որ այս դարի սկզբում գէպի խորտակեալ յշններն արտայայտուեցաւ: մէջ է բերուում այն ժամանակուայ գերմանացի նշանաւոր զրոյլ Հառուֆիի մի շարադրութիւնից հետեւալ հատուածը՝ իւր ժամանակակիցներին վերաբերեալ: Եւ, հարցրեց Պետրոսը, պատերազմ ամեննե՞ն չկայ: — Մի քիչ բայց շուտով բոլոր կվերջանայ: Յունաստանումէ՛ թուրքերի գէմ: — Այ, այդ գեղեցիկ է: բացականչեց ասպետը * քարե բուուցքը սեղանին խփելով: Ըստ տարիներ առաջ արդէն ես այնչափ վրդովուում էի, որ քը բիշտոնեայ աշխարհն այնպէս անգութ կերպով գիտում էր, թէ ինչպէս մահմետականը այդ պատուական ժողովրդին կապանդների մէջ էր պահում: այդ գեղեցիկ է, յիրաւի: Գուը գեղեցիկ ժամանակի մէջ էք ապրում և ձեր սերունդն աւելի ազնիւ է քան կարծում էի: Ուրեմն Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ապանիայի և Անգլիայի ասպետները ելեր են: ինչպէս երրեմն Իշխարդ Առիւծասիրտի օրով, անհաւասների գէմ կռուելու: Ձենովական նաւատորմիջը Արշակելագոսի վերայ է հազարաւոր մարդիկներ ափ հանելու: գաղղիական արքայանիշը մօտենում է Ստամբուլին և աւստրիական դրօշակը ծածանուածմ է առաջին շարքերում: Հա, այդպիսի կռուի համար ես ինքս կցանկայի մի անդամ ևս ձի հեծնել, իմ Գուրանդէ թուրք քաշել և իմ մարտի փողը փշել, որպէս զի բոլոր

ննջող հերոսներն ելնեն իրենց գերեզմաններից և երթան ինձ հետ պատերազմի Տաճկաց գէմ: — Ազնիւ ասպետ, պատասխանեցի ես: կարմիելով իմ ժամանակի համար, ժամանակները փոխուել են: Չեզ հաւանականարար կձերբակալէին ներկայ պայմաններում: տիրող օրէնքների համաձայն՝ իրու ուամկավարի: որովհետև ոչ Հարսուրազի գրօշակը, ոչ գաղղիական արքայանիշը, ոչ Անգղիոյ տաւելի դը և ոչ սպանական առ իւ ծնն երը կարելի է տեսնել մարանչողների մէջ: — Ո՞վ է ուրեմն կիսալումնի գէմ կռուողը, եթէ ոչ սոքա: — Իրենք Յոյները: — Յոյները, կարելի է միթէ, բացականչեց Յովիչաննեւը. իսկ պետութիւնները, ինչով են նորա զրադուած: — Նոցա գեսապանները գեռ բարձրագոյն Գլուրան մօտ են: — Մարդ, ի՞նչ է ասածդ, զրայ բերաւ Ռուանդը, զարմանքից քարացած: Կարելի է միթէ անտես անել մի ժողովրդի: որ իւր ազատութեան համար կռուում է: Սուրբ Տիրամայր, այս ինչպիսի աշխարհ է: Արդարեւ քարի գութը կարող էր այստեղ շարժիլ: — Աերջին խօսքերն արտասանենելիս նա բարկութեամբ մէլեց արծաթէ բաժակն ինչպէս բարակ թիթեղ, մինչ գիմին բարձր մինչև առաստաղ ցայտեց, ելաւ շառաչմամբ սեղանի մօտից, առաւ զէնքերն ու մայլ հայեացքով ճարճատող քայլերով գուրս գնաց սրահից:

Կ. Ա.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԱԾՄԱԿԱՆ

ՄԻ ԿԱՐԵՒԽՈՐ ԳԻՒԽ Ս. ԷՀՄԻԱՆՆԻ ՄԱՏԵՆԱ-
ԳԱՐԱՆՈՒՄ.

Ա. ԵՒ. Բ. ՄԱՆԱՑՈՐԴԱՅ ԳՐԵՒՐԻ ՍԱՈՐԵՐԵԿԱԿ
ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

Հայտնի է, որ Աստուածաշունչ մատեանը թարգմանուել է մեր նախնիքներից երկու անդամ՝ նախ Ասորերէնից և ապա Յունարենից: Սակայն մինչև այսօր մեզ հասած Ս. Գրրքի պէտակիրները, որպէս և հետեւարար բոլոր տպագիրները, Յունականից թարգմանութիւնն են ներկայացնում: Արդարեւ, քննական գրականութեան մէջ այլ և այլ ժամանակ նըկատուած են եղել ենթադրութեամբ Ասորերէնի թարգմանութեան հետքեր հայ Աստուա-

* Միջնադարեան Ռուանդի մասին է խօսքը: